ԲԱՆ ՅԱԶԳԱՍ ԵՒ ՅԱԶԻՆՍ

ԱՍԱՑԵԱԼ Ի ԲԱՄԲԱՐԱԿԷՆ

ՈՐ ԷՐ ԸՆԿԵՐ ԱՄԻՐՅՈԼՎԱԹԻՆ

Արարն նուրբ է ու ազնիւ, կու նմանի իւր ձին.
Ընկլուզն հաստատ է՝ երկայնատն, որպէս է իւր յոգի ձին.
Ալանաց ազգ Յաթինկայ է, չէկ կարմիրն շատ սիրեցին.
Ալամանն որոճայ նախանձ, նա ինքն է հին գոթացին.
Աղուանք՝ խնամիք Հայոց, զԱրիս ընդ Անարիս միացուցին։
Ասորին կեղծաւորեալ՝ 'ի մերկ ճղնաւոր նմանցուցին.
Առնաւուան որ գիր չունի, պարծի յԱղեքսանդր Մակեդոնացին։
Արմէն ասէ օտարն՝ Հայուն, Նոյայ տապանին դէտ կացուցին։
Բուլղարաց ազգ Պուլղարն է, 'ի Քուշանաց յեւրոպ անցին։
Բոշայն Գնչուն է Հայուն, քան զամէնք մերք քաղքրցուցին։
Գաբաւոնացիք Սուրբ գրոց Գնչու Զինկեանից հետ յարակցին.
Գնչուն դիրան է ազգաց, որ յամենից զոյն զինք ներկեցին.
Գաղատացին՝ որ անմիտ կոչի, է եկամուտ Գաղղիացին։
Դանիք Ցանիմարքան է, հիւսիսականաց հետ դասակցին.
Երբայեցի որ կու ասեմք՝ հին Հրէայն իսկ է Իսրայելացին։
Եգիպտիքն անաստուածք՝ ասեն թէ զաստանան պաշտեցին.
Եճուճ Մաճուճ, Գոգ Մագոգն է, անդր քան զՉին ու Մաչին։
Զաղան որ չէ զածած, քուրդն է Պարսկահայեցին.
Զվիցեր ասեն ազգ մ՚ յեւրոպ կայ, որ է հինն Հելուետիացին։
Էնն Աստուած ամենայն ազգաց լեզու շնորհեաց. Հր բաժանեցին.
Ըռուս որ ասեն՝ Մոսկովն է, որոյ ձեռն յամենեսին.
Թաթարն և Պուխար Քուշանքն են տաներն Անարիացին։
Թուրքմանն ծիծաղկոտ Թորգոմացի, Հայոց հետ հօրեղբօրցուցին,
Ժավա մեծ կղզի մի է 'ի Հընդկական Ովկիանոսին,
Իտալային ճարտար ազգ է, գահիւ լեզուաւ նոր Հռոմայեցին,
Լաշն լաղիկայն է, որոյ մերձաւոր կողքիացին.
Լեհք ազատականք են՝ ազնիւք, յանախ գժտին ու պարծին.
Լիւրիկեցին Դաղմատն է, սա այլ յԱւեստարանն Հռոմայեցին։
Խափչիկ որ ասեն՝ Հապաշն է, դշխոյն Հարաւոյ եթիոպացին,
Խրիստին նորա պէս Քրիստոնեայ է, նա այլ է հին Եգիպտացին.
Խուժիկ որ կու ասեմք չէ խուժ դուժ, այլ Թրքաւելու խուղիատանցին։
Ցայլթ Հայեր՝ Հայհոռոմք են, Հայք սապէս անուանեցին.
Ցանարք կովկասի հիւսիսականաց լեռնային ազգ մի ծանուցին.
Կանանց ազգն համարէն է, զՊամազոնիկա սեփականցուցին.
Կիւլիկեցին կորեալ ազգ է, Հայք զնոր կիւլիկիայն շինեցին.
Կիւրեղացին Սիմէոնին՝ յԱիրիկա է, անդ դատանի Պինկազին։
Հայն կուսարար ու տաքգլուխ, բաղումք զնա շատ ծեծեցին.
Հնդիկն պաճուճազարդ, ազանց և ականց է առհմածին.

digitised by A.R.A.R.@

Հունդարացին մի նոյն ազգ է՝ որ և Մաճառ գնա կոչեցին։
Հրէայն լոյս ծագեաց զԲրիստոս, խորագէտք զԹալմուտ վերաձին.
Զազու պէս ազգ մանտրտիկ ասեն լինել զլաբանիացին.
Ղեկաց ազգ Լեզկիներն են, քալ և ամուր սեգ լեռընցին.
Ճարան՝ Զինանման սուր ազգ մի է, ՝ Ասիական մեծ կողեցին.
Ճենազն գուշանաց ցեղն է, ղոր վեր 'ի վեր բարձրացուցին.
Ճինվիղն Ղալաղայն է չիներ, շառաւիղ մ՝ է յիտալացին.
Մարաց ազգն որ Մուրացան, Թագ, գաւազան, Պարոք անցուցին.
Մաճառն այլանդակ գուշանական, գնա Հայք ազնուացուցին.
Միաստինքն որք Ամազոնք 'ի զարմէ կանանց վեր կացին.
Մենկէէն ցեղ վրացի՝ լեռնականաց հետ դասեցին.
Մոկք և Մուկք՝ Մոգաց ցեղէ, զաստղն տեսին երկիրպագեցին.
Մուղալք լեղուագոյնք՝ օձակն ցեղից հետ բազմակցին.
Ցոյնն սրամիտ բազմաժառանգ՝ նա է հինն Հելլենացին.
Ցոնիացին նոյն ինք Ցոյնն է, Ասիոյ ազգաց հետ խնամցուցին։
Նաղոլրեցի մեր Ցեռան ասին, աշխարհք փրկիչ գաւանեցին.
Նէապօլսեցին չէ որիշ ազգ, ճուղ մ՝ է յարմին յիտալացին.
Շակաց ազգ Սագաստան է, որ այժմ Պարսից է Սիսթանցին։
Ուտիք մասն են Հայոց, ունին լեզու զԱուէացին.
Զարքազն լեռնականաց մարդագողն է, բուն իսկ Եգերացին.
Զինն մեա 'ի Գոգ Մագոգն է, ահեղ պարսկաէն Զինուամաչին.
Պարսիկն փառաւէր ու շքեղ՝ է հինն Արեացածին.
Պոնտացի որ կու ասեն Պիղատոսի՝ իմա թէ է Սնծուկին.
Պռուշ մարտիկ ճուղ մ՝ է՝ հաստ և յաղթ, որոյ կոճղ Ալամանցին։
Սամարացին չէ Հրէայ՝ ծանոյց զայն կինն Մագդաղինացին.
Սամոյատ որ կոչին՝ մուշտակաւոր ցեղն է պինդ հիւսիսցին։
Սեաւ պինդ ոչ գեղեցիկ գամացեղ գռուզն է Ափրիկեցին.
Սկլաւն օձակ Սարմատն է, տաք և տիրող և բազմաձին.
Սիպերիացին հիւսիսական, տար Զինու մեա սահմանեցին.
Սպանեօլն բարձրայօն թէ 'ի լեռանց է թէ ծովածին.
Վրացին յամառ և անապարձ, Դավկասայնոց վեհ դասեցին.
Տաճիկ որ ասին՝ ազնիւ Արաբն է և Սուրբ գրոց խմայելացին։
Տայք և Տուհք լեռնականք են և կերպակերպ Տաղստանցին.
Բամից ազգք յամերամք Բաբելոնէ յսփիւռս ցրուեցին.
Ցեղուցեղ գազգս Սարմատականս բաժանէ մայրն Սկիւթացին.
Իրիկ Եւրիւկ որ կ'ասին՝ Թափառակաց ցեղն է Թուրքեցին.
Փռանկն փաղաքուշ՝ նա կելտն է ու հին Գաղղիացին։
Փռիւգացին ազգ կորուսեալ՝ 'ի նորա երկիրն է Քէօթահեացին,
Փռիւգացի էր ալքայն Միտաս, որոյ ականջք իշոյ ցցուին։
Փոռթուկալցիք ծովեղերեայք 'ի Հնդկաստան երթևեկեցին.
Քաղդէացիք հին աստղագէտք, այժմ ասեն թէ Քիլտանցին.
Քանանացին փախստական մինչ յՕվկիան գնա քշտեցին.
Քուրդն է կորդուք ու Մարացի, Զոհակի լակուտ նմա ասացին։
Ֆէս որ կ'ասեն Մաղրբաղ է յԱֆրիկէ, ՝ Ճիպրալթարու հետ դիմակցին.
Ֆիլէմէնկն է Հոլանտացին, ուր Հայք տպարան հաստատեցին։
Ֆռանսիայն վերոյ Փռանկն է, մայր քաղաքաց նորա Փարիզեցին։

ԲԱՄԲԱՐԱԿ

digitised by A.R.A.R.@